ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 մայիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

67
(2917)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ ԴԵՌԵՎՍ ԱՆՊԱՏԻԺ ԵՆ

Նախորդ ամիս՝ ապրիլի 15-ին, տեղի ունցած սահմռկեցուցիչ խոշտանգման ու նվաստացման դեպքը շարքային քաղաքացի Սամվել Վարդանյանի նկատմամբ մինչ օրս շարունակում է անպատիժ մնալ:

Հիշեցնենք, որ ապրիլի 15-ին հանրային տրանսպորտում երիտասարդ Սամվել Վարդանյանը, տեսնելով ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հակոբ Ասլանյանին, նրան թիրախավորել էր՝ անվանելով «ժեխ բիձա», «դավաճան»: Դեպքից հետո նրան ձերբակալեցին, իսկ քննչականից ձերբակալվածների պահման վայր տեղափոխելու ճանապարհին՝ երիտասարդին դիմակավորված բանդան ծեծել էր, խոշտանգել, սեռական նվաստացման ենթարկել: Այս պահի դրությամբ՝ պատգամավորի նկատմամբ նման վարք դրսեւորելու համար Սամվել Վարդանյանի նկատմամբ առաջադրված 2 մեղադրանքների՝ խուլիգանություն եւ քաղաքական հայացքներով պայմանավորված թշնամանք հարուցելու մասով քննությունն արդեն ավարտվել է, եւ գործը շուտով դատարան կմտնի:

Սակայն, երիտասարդին խոշտանգելու գործով մինչ օրս ոչինչ չի արվել. չի պարզվել՝ ովքեր էին ուղեկցող ոստիկանները, դիմակավորված բանդայի անդամները, եւ ինչ պատիժ է սպասվում նրանց:

Կատարվածի առիթով 1 ամիս առաջ «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին հարցում էր ուղարկել՝ հետաքրքրվելով՝ որպես ժողովրդավարությունը թիվ մեկ բրենդ հռչակած կառավարության ղեկավար, ինչ գնահատական է տալիս եւ ինչ քայլեր է ձեռնարկել այս անպատժելիության առիթով:

Այս հարցադրումները ՀՀ Կառավարությունից փոխանցել են ՀՀ ՆԳՆ: Նախարարությունից այսպիսի պատասխան ենք ստացել. «ՆԳՆ ներքին անվտանգության եւ հակակոռուպցիոն վարչության 2024 թվականի ապրիլի 22-ի գրությամբ, տեղեկացնում եմ, որ քաղաքացի Սամվել Վարդանյանի նկատմամբ ենթադրյալ բռնություն գործադրելու հանգամանքների կապակցությամբ հիշյալ վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել է եւ որոշվել է դրան անդրադառնալ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող թիվ 57120424 քրեական վարույթով իրավական գնահատականի վերջնական արդյունքներով: Արդյունքների մասին կհայտնենք լրացուցիչ»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Լավագույն ավանդույթները» շարունակվում են. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը միլիոնավոր դրամներ փոխանցած տասնյակ անանուն նվիրատուների հարցը տակավին քրեաիրավական գնահատականի չարժանացած՝ ականատես ենք լինում «Իմ քայլը» հիմնադրամի նույն պատկերին: Ըստ հիմնադրամի պաշտոնական կայքի տեղեկության՝ 2023-2024թթ. ընթացքում Աննա Հակոբյանին մուծումներ են կատարել 24 կազմակերպություն եւ ֆիզանձինք, որոնցից 7-ը՝ անանուն կարգավիճակով: Բացի դրանից, նշված տեղեկությունից պարզ է դառնում (տե՛ս ArmLur.am կայքում), որ ԶՊՄԿ բաժնետոմսերի մի մասը պետությանը նվիրաբերելը ունեցել է կոնկրետ արդյունք՝ բազմաթիվ տնտեսաքաղաքական մարտահրավերների հորձանուտում գտնվող ԶՊՄԿ-ն չի մոռացել իր ԲՀ-ի միջոցով 2 անգամ մուծվել՝ վիթխարի՝ 70 միլիոն դրամի չափով:

ԻՄ ՔԱՅԼԸ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Այսօրվանից մեկնարկում են ԱԺ քառօրյա նիստերը: Օրակարգում, ի թիվս այլ հարցերի, նաեւ Սահմանադրական դատավորի ընտրության հարցն է ընդգրկված, որը դեռ նախորդ քառօրյային պետք է քննարկվեր, բայց հետաձգվեց, քանի որ ՍԴ դատավորի թեկնածուն այդ օրը չէր եկել ԱԺ: Նշենք, որ դատավորի թեկնածուն հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրն է՝ Դավիթ Խաչատուրյանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ թեեւ ընդդիմադիր պատգամավորների մի մասն այս օրերին Կիրանցում է, բայց նրանց մյուս մասը, որոնք Երեւանում են, կմասնակցեն նիստերին: Ավելին՝ ինչպես մեզ ընդդիմադիր պատգամավորները փոխանցեցին, պատրաստվում են սուր հարցեր ուղղել՝ Տավուշում տեղի ունեցող ապօրինի սահմանազատման վերաբերյալ:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ կին դատավորների մեծ մասը հրաժարվել է ԲԴԽ դատավոր անդամ դառնալուց, եւ նրանք դիմել են ԲԴԽ՝ խնդրելով իրենց անունները հանել ցուցակից: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտը 10-ից ավելի կին դատավորների ծանուցում է ուղարկել եւ հայտնել, որ նրանք կարող են դառնալ ԲԴԽ դատավոր անդամ: Միաժամանակ կանխատեսել էինք, որ դժվար թե համաձայնողներ լինեն: Եվ ահա, դիմեցինք ԲԴԽ, որտեղից ի պատասխան՝ հայտնեցին, որ. «Ծանուցում ուղարկվել է բոլոր այն դատավորներին, որոնք համապատասխանել են թափուր հաստիքը համալրելու չափանիշներին. ուղարկված ծանուցումներից բացառությամբ վարչական դատարանի դատավոր Մերի Համաբարձումյանի՝ մնացած ծանուցվածները տեղեկացրել են, որ իրենք չեն ուզում ընդգրկվել քվեարկությունում, հետեւաբար իրենք ավտոմատ դուրս են մնացել»: Նկատենք, որ առաջին ատյանի դատարանից 10, իսկ մասնագիտացված դատարանից 3 կին դատավոր է ծանուցվել, որ համապատասխանում են ԲԴԽ դատավորի անդամ դառնալու չափանիշներին: Եվ ահա, ծանուցված 13 դատավորներից 12-ը հրաժարվել են գնալ ԲԴԽ ու դիմում են ներկայացրել, որ իրենց անունները չներառեն քվեաթերթիկում: Ասել է թե՝ կին դատավորների զգալի մասը ցանկություն չունի գնալ ԲԴԽ:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ ՊԻՏԻ ԱՍԻ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է կինոռեժիսոր Հովհաննես Գալստյանի հետ՝ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման մասին:

-Արդեն տեւական ժամանակ է, ինչ սրբազան հայրը մայրաքաղաքում է, եւ իրականացնում են քայլերթեր, խաղաղ անհնազանդության ակցիաներ, ի՞նչ կարծիք ունեք այս մասին, մասնակցո՞ւմ եք:

-Այո, մասնակցում եմ, չնայած ունեմ «ՎԵՐԱ» ֆիլմի հաստատված ժամանակացույց, որը անընդհատ վերաձեւում ենք՝ շարժմանը ֆիզիկապես մասնակցելու համար, ինչից տուժում են բազմաթիվ մարդիկ, բայց թիմը միակամ է. առայժմ չեն ըմբոստանում դրա դեմ:

Ես կուզեի ավելի ակտիվ ներգրավված լինել, բայց այն, ինչը մենք անում ենք «ՎԵՐԱ» ֆիլմով, վստահաբար, պակաս կարեւոր չէ մեր հայրենիքի համար, Արցախի, Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների, իրենց պապերի, ապուպապերի, մի ամբողջ հավերժություն իրենց պատկանող հողի վրա ապրելու իրավունքի վերականգնման համար: Ի դեպ, մինչ այս պահը, մենք Հայաստանում «ՎԵՐԱ» ֆիլմը պատրաստում էինք միանգամայն միայնակ, առանց աջակցության, ինչը չափազանց բարդ բան է կինոարտադրության մեջ, գրեթե անհնար: Սա փոքր դրվագ է, աննշան մի խազ երկրում տիրող կառավարման քաոսի մեջ, բայց այն, որ մենք, այսպիսի բացառիկ կինոմատոգրաֆիական ազդեցիկ պատմություն կերտելով, նման հզոր զենք ստեղծելու ճանապահին չունենք աջակցություն սեփական երկրում, դա մեր երկրի չկայացվածության, ապաշնորհ կառավարման մասին է, այնպես որ, մեր թիմն ու ես Բագրատ Սրբազանի կողքին ենք՝ պայքարի առաջին օրից. մենք նույն բանի համար ենք պայքարում:

-Սրբազանի շարժմանը միացել են արվեստի շատ ներկայացուցիչներ, մտավորականներ եւ այլք: Ինչքանո՞վ է կարեւոր մտավորականության եւ արվեստի ներկայացուցիչների ներգրավվածությունը այս շարժմանը:

-Մշակութային գործիչ բառի բովանդակությունը շատ խրթին է, ես կխոսեմ ավելի հստակ խմբի՝ արվեստ արարողների, արվեստագետների մասին: Ցանկացած երկրի պատմության մեջ լինում են բարդ շրջափուլեր, երբ արվեստագետը, ստեղծագործելուց զատ, պետք է նույն տաղանդով, նույնքան շնորհալի ձեւավորի եւ արտահայտի քաղաքացիական կամ քաղաքական բովանդակություն: Դրա համար նա արժանանալու է հալածանքի, որովհետեւ իշխանություն ունեցողները եւ ընդհանրապես հասարակության պահպանողական շերտերը միշտ սարսափում են անկեղծ, ուղիղ, շնորհալի խոսքից: Իմ ընկեր, կինոպրոդյուսեր Արմեն Գրիգորյանը ճշմարտությունը բարձրաձայնելու համար վճարեց կյանքով: Իմ ֆիլմերը վեց երկար ու ձիգ տարիներ զրկված են պետական ֆինանսավորումից: Բայց միեւնույնն է, կան պահեր, երբ արվեստագետը պետք է հաղթահարի վախն ու ասի ճշմարտությունը: Ճշմարտությունն այն է, որ մեր հայրենիքը կառավարում են մարդիկ, որոնց մտավոր, բարոյական, մասնագիտական որակները հակասում են իրենց ստանձնած առաքելությանը՝ հայրենիքը կառավարելուն: Նրանք ապականում են մեր հայրենիքը՝ ներքաշելով մեզ ստի, ատելության, բանսարկությունների, մանիպուլյացիաների սարդոստայնի մեջ, ու մենք տեսնում ենք, որ քաղաքական համակարգը ի զորու չէ կանգնեցնելու իշխանության գլխին կանգնած խմբակին:

Ընդդիմությունը ամբողջ 4 տարի, հասարակության լայն աջակցության պայմաններում անգամ, ի զորու չեղավ ստանձնել իշխող ուժին իշխանազրկելու պատասխանատվություն: Քաղաքական ուժերի զինանոցը, այդ թվում՝ ֆինանսական, մտավոր, մասնագիտական ռեսուրսները, բավարար չեն իշխանության գլխին կանգնած մեկ մարդուն իշխանությունից հեռացնելու համար: Գոյաբանական վտանգի դիմաց հայտնված ազգը ստիպված է մոբիլիզացնել իր բոլոր առողջ ռեսուրսները՝ զարգացման բնականոն ընթացքին վերադառնալու համար. ու սա է պատճառը, որ հայ ազգի երկու ամենահզոր ռեսուրսները՝ Հայ Առաքելական Եկեղեցին, իր ինստիտուցիոնալ փորձառությամբ, կազմակերպչական ցանցով եւ հայ ազգային էլիտան՝ արվեստ, գիտություն արարող մարդիկ, լայն իմաստով՝ մտավորականությունը, որոշել են նեցուկ լինել, իսկ գուցե նաեւ ուղղորդել քաղաքական ուժերին՝ մեր հայրենիքը կորուստների անվերջանալի շրջանից դուրս հանելու համար:

-Ըստ Ձեզ՝ կհաջողվի՞ Բագրատ Սրբազանին՝ հասնելու նպատակին:

-Բագրատ Սրբազանը շատ ազդեցիկ քարոզիչ է, լայնախոհ հոգեւորական: Իմ տպավորությամբ, նա խորապես գիտակցում է վտանգը եւ հասկանում է, որ հաջողության բանալին մեկն է՝ միասնականությունը: Ցավոք, այդ բանալին մեր հակառակորդի ձեռքում է ու նա կիրառում է իր բոլոր գործիքները՝ մեզ պառակտելու համար: Մինչ այս պահը Բագրատ Սրբազանը կարողանում է սանձել պառակտման հողմերը ու ցանում է միասնականության սերմեր. այդ սերմերը եթե ծիլեր դառնան, մենք կարող ենք փրկվել: Միասնականություն, հավատ՝ սեփական ուժերի հանդեպ, համբերություն եւ ճնշում. ու խավարը կնահանջի:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 210

ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՐՑԸ՝ ՉԼՈՒԾՎԱԾ

16.09.2019թ.ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր. «Երեւանում ստեղծվել է թափառող կենդանիների վնասազերծման ՀՈԱԿ-ը.

Սրանով դադարեցվել է շների սպանդի անթույլատրելի պրակտիկան: Թափառող կենդանիները համարակալվում են, ստերջացվում են, նրանց մի մասը հանձնվում է խնամքի: ՀՈԱԿ-ի համար կառուցվում է կայան, որն ապահովված կլինի ժամանակակից հարմարություններով»:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ Երեւանում եւ ընդհանրապես՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում թափառող կենդանիների խնդիրն այժմ շատ ավելի սրված է, քան նախկինում: Բազմաթիվ են թափառող շների կողմից մարդկանց վրա հարձակման վերաբերյալ քաղաքացիների ահազանգերը:

Դեպքերի քանակական պատկերը հետեւյալն է՝

- ✓ 2022թ. - 133 դեպք
- ✓ 2023թ. - 134 դեպք
- ✓ 2024թ. հունվարին՝ 5 դեպք:

Խոսքը ոստիկանություն ահազանգերի մասին է: Իսկ գերակշիռ դեպքում քաղաքացիները չեն դիմում ոստիկանություն կամ հիվանդանոցներ, այլ տնային պայմաններում են կազմակերպում բուժումը: Պատգամավոր Գառնիկ Դանիելյանն անգամ կրկնակի կծելու դեպքերի մասին էր ահազանգել:

Մարզերում չկան կենդանիների վերահսկման եւ վնասազերծման մասնագիտացված կենտրոններ, անգամ բյուջեում գումար չի առանձնացվում:

ՍՐԲԱԶԱՆԸ ԳՆԱՑԵԼ Է ԿԻՐԱՆՑ

Տավուշի թեմի առաջնորդ, «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանին երեկ հաջողվել է հասնել Կիրանց: Այս մասին փոխանցել է ընդդիմադիր պատգամավոր Գառնիկ Դանիելյանը:

Նշենք, որ մեծաթիվ ոստիկանական ուժեր փակել էին Կիրանց տանող ճանապարհը: Նրանք մի քանի շարքով պատ էին կազմել եւ արգելում էին պատգամավորներին առաջանալ գյուղ:

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՁՈՐՔԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

«Միակողմանի զիջումները, որոնք արվել են ադրբեջանական կողմին, արդեն իսկ այսօր իրենց արտացոլումն են գտնում Կիրանց գյուղի տարբեր հատվածներում տեղադրված սյուներով: Արդեն իսկ առաջին սյուներն են տեղադրվել Կիրանց գյուղում՝ գյուղը բաժանելով երկու մասի՝ ադրբեջանական եւ հայկական». - Տավուշի մարզում երեկ հայտարարել է ԱԺ պատգամավոր Գառնիկ Դանիելյանը:

Դանիելյանը հավելեց. «Առանց որեւէ երաշխիքի, առանց միջազգային ստանդարտի, միջազգային նորմերի կիրառման միակողմանի զիջումներ են իրականացվել: Չկա աշխարհում մի պրակտիկա, որ գյուղը բաժանելով երկու մասի՝ իրականացվի նման գործընթաց: Ամբողջությամբ ապօրինի է, եւ այս իշխանությունները հուլիս ամսին ԱԺ-ում պետք է հաստատեն սահմանազատման եւ սահմանագծման նորմը: Այսինքն՝ առանց նորմերը հաստատելու, առանց որեւիցե բանի զիջվում են կենսական նշանակություն ունեցող տարածքներ, առաջնագիծ, գերիշխող դիրքեր, Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհը, սրբավայրեր, եկեղեցիներ: Սահմանն անցնելու է Կիրանց գյուղի կենտրոնում գտնվող դպրոցի հարեւանությամբ: Ինչպե՞ս պետք է հայ մարդն անվտանգ լինի»: Նա հայտարարեց, որ սա հիմք է դնում ՀՀ զինված ուժերի կազմաքանդման: «Այսպես կոչված սահմանապահ զորքեր տեղակայելով՝ ՀՀ զինված ուժերը լուծարվելու են: Դա Իլհամ Ալիեւի պահանջն է, ասում են՝ եթե չկատարենք, պատերազմ է լինելու». - նշել է նա:

Գառնիկ Դանիելյանը հիշեցրեց, որ 1990-ական թվականներին ՀՀ անվտանգությունն ապահոված հերոսներն Ադրբեջանի ցուցակներով հանցագործ են: «Պիտի պահանջեն ՀՀ իշխանություններից, ասեն՝ քանի որ դուք այստեղ մեր ներկայացուցիչներն եք, այս մարդկանց հանձնեք, ինչպես որ Արցախի մեր ռազմաքաղաքական ղեկավարությանը հանձնեցին. հիմա էլ Բաղանիսում ցուցակները հրապարակվել են, նախնական ցուցակներ են, ասելու են՝ որ այս մարդկանց չհանձնենք, պատերազմ է լինելու, ժողովուրդ ջան».- ասել է նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԻԾԵՑ ՇՈՒՇԻՈՒՄ ՁՈՒՎԱԾ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻՆ

«Արյուն կա իրենց վզին: Այդ տղաներից չորսին ես եմ հուղարկավորել». - Կիրանցի փակ ճանապարհի մոտ, լրագրողների հետ զրույցում ասաց Բագրատ սրբազանը՝ հիշելով 44-օրյա պատերազմի ժամանակ Շուշիում ոստիկանների զոհվելու դրվագը:

Սրբազանը մանրամասնեց. «Իրենց մեղքով է եղել, իրենց հրամանատարության ներքո. անիմաստ տեղը տղաներին տարել են Շուշի, առանց որեւէ պատճառի, պատերազմի սկզբի հատվածում հենց, հավանաբար այն պատկերը տալու համար, թե զորքը չի գործում»:

Ապա, ցույց տալով սեւ բերետավոր ոստիկաններին՝ սրբազանն ասաց. «Սեւազգեստներն «ուժեղ տղերք» են, իրենք մի 800 հազար աշխատավարձ են ստանում՝ այս մարդկանց՝ ցուցարարներին ծեծելու համար»:

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրանի նախագահ Ռաիսիի եւ նրան ուղեկցող պատվիրակության նահատակությունից հետո Իսլամական խորհրդարանում կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները համատեղ հայտարարությամբ իրենց ցավակցությունն են հայտնել ժողովրդին եւ Իսլամական Հեղափոխության առաջնորդին:

Հայտարարության մեջ ասվում է.«Մենք՝ որպես Իրանի իսլամական խորհրդարանում կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներ, ԻԻՀ գերագույն առաջնորդին, զոհերի ընտանիքներին եւ Իրանի մեծ ժողովրդին ցավակցում ենք նախագահ այաթոլլահ Էբրահիմ Ռայիսիի, ԱԳ նախարար Ամիր Աբդոլլահյանի, Թավրիզում ԻԻՀ առաջնորդի ներկայացուցիչ եւ ուրբաթօրյա աղոթապետ այաթոլլա սեյեդ Ալ Մոհամմադ ալ-Հաշեմիի, Արեւելյան Ատրպատականի նահանգապետ Մալեք Ռահմաթիի, գեներալ սեյեդ Մահդի Մուսավիի եւ ուղղաթիռի անձնակազմի անդամների զոհվելու կապակցությամբ»:

Հայտարարությունը ստորագրել են Իսլամական խորհրդարանում Սպահանի եւ հարավային Իրանահայության պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանը, Թեհրանի եւ հյուսիսային իրանահայության պատգամավոր Արա Շահվերդյանը, Իրանի ասորի եւ քաղդեացի քրիստոնյաների պատգամավոր Շառլի Էնվիե Թեքիեն, Իրանի զրադաշտականների պատգամավոր Էսֆանդիար Էխթիարին եւ Իրանի հրեաների պատգամավոր Հոմայուն Սամե Յահ Նաջաֆաբադին:

Հիշեցնենք, որ մայիսի 19-ին՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպումից հետո, Թեհրան վերադառնալիս վթարի էր ենթարկվել Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի ուղղաթիռը. զոհվել են նաեւ արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր-Աբդոլլահյանը, Արեւելյան Ադրբեջան նահանգի ղեկավարը եւ այլ պաշտոնյաներ:

Իրանի Իսլամական հանրապետությունում 5-օրյա սուգ է հայտարարվել:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«ԳՅՈՒՂԸ ԿԻՍՎՈՒՄ Է ԵՐԿՈՒ ՄԱՍԻ»

Ամբողջ աշխարհը պետք է հասկանա՝ Հայաստանում ինչ բարքեր են տիրում:

Այս մասին լրագրողների հետ զրույցում հայտնեց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը:

«Երեկ ամբողջ օրը պատգամավորներին հետապնդել են: Դաշտերով ու ձորերով հասել ենք Կիրանցի մատույցներ, մեր կյանքին էլ վտանգ է սպառնացել, երկինք են բարձրացրել անօդաչու թռչող սարքեր, ԱԱԾ եւ ոստիկանական ստորաբաժանումները մոտավորապես 10 շղթա էին կազմել, կարծես գեղարվեստական ֆիլմ նկարեին, ամոթ է».- ասաց պատգամավորը:

Գառնիկ Դանիելյանը շեշտեց, որ երեկ էլ քաղաքացիները ցանկանում էին Սրբազան հոր հետ շփվել, ծանր հոգեբանական վիճակում էին գտնվում:

«Վրաստանից գալիս են՝ խնդիր չկա, Իրանից գալիս են՝ խնդիր չկա, Ռուսաստանից գալիս են՝ խնդիր չկա, խնդիրը մե՞նք ենք: Մենք հասկանում ենք, որ Ալիեւը որոշել է, որ մենք չպետք է մտնենք, այստեղի աշխատողներին ասել է, որ թույլ չտան՝ մտնենք: Դպրոցի շրջակայքում էլ է սյուն տեղադրվել, եթե սյուներով նայենք, գյուղը կիսվում է երկու մասի՝ մի կողմը հայկական է լինելու, իսկ մյուսն ադրբեջանական, բայց այդտեղ ոչ մեկը չի ապրելու».- ընդգծեց նա:

Պատգամավորի խոսքով՝ խնդիրն այն է, որ ապօրինի գործողություն է իրականացվում, ու թույլ չեն տալիս գյուղ մտնել:

Հիշեցնենք՝ մայիսի 15-ին՝ Կիրանցում սահմանազատման գործընթացի վերաբերյալ ԱԳՆ հաղորդագրությունից հետո, կիրանցեցիները կրկին ճանապարհը փակել էին:

Ոստիկանական ուժերը երեկ ընդդիմադիր պատգամավորների եւ մշակութային մի շարք գործիչների արգելում էին մտնել Կիրանց:

Ընդդիմադիր պատգամավորներին այլընտրանքային ճանապարհով հաջողվեց հասնել գյուղ: Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդագրություն էր տարածել, որ Տավուշի Կիրանց գյուղի հատվածում իրականացվում են սահմանի պահպանությունը ստանձնելուն ուղղված նախապատրաստական աշխատանքներ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԻՐԱՆՑՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԵԼ Է ԱՋԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԸ

Արման Թաթոյանի գրառում է արել Կիրանցում տեղի ունեցող դեպքերի մասին՝ նշելով. «Ձեզ ո՞վ է իրավունք վերապահել քաղաքական որոշումներով ու առանց իրավական հիմքերի Կիրանցում իրականացնել գաղտնի «սահմանազատում», որ վերաբերում է մեր երկրի պետական սահմանի, մեզանից յուրաքանչյուրի անվտանգությանը:

Կիրանցում ոստիկանները կամայական որոշումներով են սահմանափակել քաղաքացիների, գյուղերի բնակիչների ու մասնագիտական աշխատանք կատարող լրագրողների ազատ տեղաշարժը, առանց իրավական կանոնների ստեղծված են ոստիկանական ինչ-որ անցակետեր, եւ մարդկանց տեղաշարժը թույլ են տալիս սեփական հայեցեղությամբ:

Առանց որեւէ բացատրության ու հիմքերի է տեղի ունենում պետական սահմանի, այսպես կոչված, «սահմանազատումը», որի կանոնակարգի նախագիծ անգամ գոյություն չունի:

Պետական սահմանին եւ սահմանային անվտանգության հարցերը վերաբերում են մեզանից յուրաքանչյուրին եւ առաջնահերթ՝ սահմանային բնակիչներին, նրանց կենսական իրավունքներին. ցանկացած սահմանափակում պահանջում է հանրային հաշվետվություն ու իրավական պատշաճ հիմնավորում:

Մինչդեռ, լրագրողների մասնագիտական աշխատանքը, մարդկանց ազատ տեղաշարժը խոչընդոտելով՝ թաքուն ու անհաշվետու իրագործվում են անօրինական որոշումներ»:

ՇԱՐԺՈՒՄԸ ԴՐԱԿԱՆ ԵՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Նոր ուժ» կուսակցության հիմնադիր եւ նախագահ Հայկ Մարությանը սոցցանցի իր էջում գրում է.

«Սիրելի ժողովուրդ,

Մեր գնահատականը Հայաստանում ստեղծված ներքաղաքական ճգնաժամի վերաբերյալ հնչեցրել ենք դեռեւս մայիսի 1-ին՝ «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության հիմնադիր համագումարին: Այդ գնահատականը հետեւյալն է.

2021-ի ընտրություններով ձեւավորված կառավարության խոսույթը մի քանի անգամ էական փոփոխությունների է ենթարկվել մեր երկրի առաջ ծառացած ամենակենսական խնդրի՝ Ադրբեջանի հետ հարաբերությունների հարցում: Սկսած Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը որպես «կարմիր գիծ» ճանաչելուց, մինչեւ Արցախի իսպառ ուրացում, սկսած Եվրահնտեգրացիայի խոստումներից, մինչեւ Աստանա եւ «ռեգիոնալիզացիա»: Հետեւաբար, նրանց հռչակած որեւէ սկզբունք ու «կարմիր գիծ» այսօր ոչ մի հավատ չի ներշնչում: Իշխանություն, որն այս տարիների ընթացքում հազար ու մի սահման է խախտել, հազար ու մի խոստումից հետ կանգնել, այդ իշխանությունն այլեւս կորցրել է Հայաստանի ճակատագրին վերաբերող հարցերով զբաղվելու լեգիտիմ իրավունքը:

2021-ի ընտրության ժամանակ ՔՊ-ին տված քվեն այլեւս առ ոչինչ է:

Գործող իշխանությունը չունի բավարար կոմպետենտություն, գիտելիքներ եւ կարողություններ՝ այս կարեւորագույն հանգրվանում Հայաստանն առաջնորդելու համար: Նիկոլ Փաշինյանն ու նրա թիմը այլեւս անելիք չունեն, նրանք պետք է հեռանան:

Անդրադառնամ նաեւ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի՝ իր հետ հանդիպելու հրավերին: Նախ, շնորհակալ եմ Սրբազանին հրավերի համար եւ սիրով պատրաստ եմ հարմար առիթի դեպքում հանդիպելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական առաջնորդի եւ սիրված հոգեւորականներից մեկի հետ՝ իմ հարգանաց հավաստիքը նրան անձամբ փոխանցելու եւ, ինչու ոչ, զրուցելու «չարի ու բարու, ստի եւ ճշմարտության» (ինչպես Սրբազանն է ասում) կամ «սեւ ու սպիտակ ուժերի» (ինչպես ես եմ ասում) մշտարդիական պայքարի մասին:

Ինչ վերաբերում է Սրբազանի գլխավորած քաղաքական պայքարին, ապա թեեւ խոր գաղափարական անհամաձայնություն ունենք շարժման կողքին կանգնած հիմնական քաղաքական ուժերի ու հարթակից հնչած մի շարք թեզերի հետ, այդուհանդերձ, դրական ենք գնահատում յուրաքանչյուր դեմոկրատական խաղաղ պրոցես: Փաստ է, որ մայիսի 9-ին կայացած հանրահավաքը ամենաբազմամարդն էր 2018-ի ժողովրդական շարժումից հետո եւ մեկ անգամ եւս ապացուցեց, որ Փաշինյանի իշխանությունը կորցրել է հանրության վստահությունը:

Միեւնույն ժամանակ համոզված ենք, որ նոր իշխանությունը Հայաստանում պետք է ձեւավորի միայն ժողովուրդը՝ ազատ, հավասար, համընդհանուր արտահերթ ընտրությունների արդյունքում»:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԴԵՊՔԵՐ

Բացահայտվել է թմրամիջոցների ապօրինի տեղափոխման մի քանի փոխկապակցված դեպք:

Պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը, շարունակելով պայքարը թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի՝ Հայաստանի Հանրապետության սահմանով անօրինական տեղափոխման ուղղությամբ, օրերս բացահայտել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության փոխկապակցված մի քանի դեպք:

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության, ինչպես նաեւ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման եւ հսկողության վարչության, ԱԱԾ տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչության աշխատակիցները համատեղ, «Ապավեն Տերմինալ» ընկերության մաքսային հսկողության գոտում մաքսային զննման են ենթարկել ԱՄՆ-ից՝ «Տրանս Շիփփինգ» ընկերության միջոցով ՀՀ ներմուծված միջազգային սուրհանդակային առաքանին:

Բացի անձնական օգտագործման առարկաներից հայտնաբերվել են 23 գրամ եւ 507 գրամ ընդհանուր քաշով 2 փաթեթներ՝ մարիխուանա տեսակի թմրամիջոցի զանգվածների պարունակությամբ եւ հաշիշի յուղ՝ 24 գրամ քաշով:

Ձերբակալվել եւ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն է տեղափոխվել ՀՀ 3 քաղաքացի: Նրանք ենթարկվել են ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության, որից հետո տեղափոխվել են ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն: Հարուցված քրեական վարույթի շրջանակներում քաղաքացիները ձերբակալվել են:

Տվյալ առաքանին ՀՀ ուղարկող անձի տվյալները պարզվել են: Ճշտվել է նաեւ, որ նշված թմրամիջոցները պետք է իրացվեին տելեգրամյան ալիքի միջոցով:

Դատարանի որոշմամբ՝ ձերբակալվածներից մեկի՝ Ն. Ա.-ի բնակության վայրում կատարված խուզարկության ժամանակ, վերջինս ներկայացրել է 1 կիլոգրամ մարիխուանա տեսակի թմրամիջոց, ինչպես նաեւ կոկաին տեսակի թմրամիջոցի պարունակությամբ ինքնակպչուն ժապավեով ամրացված 38 փաթեթ՝ ընդհանուր 66 գրամ քաշով:

Օպերատիվ հետախուզական միջոցառումների ընթացքում տեղեկություններ են նաեւ ստացվել, որ ՀՀ են ներմուծվելու նույն անձի անունից ուղարկված թմրամիջոցով առկա եւս երկու առաքանի:

Նշված տեղեկություններն իրացնելիս ՊԵԿ եւ ԱԱԾ աշխատակիցները «Ապավեն Տերմինալ» ընկերության մաքսային հսկողության գոտում մաքսային զննման են ենթարկել ԱՄՆ-ից ՀՀ ներմուծված սուրհանդակային առաքանիները:

2 ծանրոցում էլ բացի անձնական օգտագործման առարկաներից հայտնաբերվել են 1035 եւ 492 գրամ քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոցի պարունակությամբ փաթեթներ:

Մաքսանենգության այս դեպքով Երեւանի թաղամասերից մեկում մարիխուանա տեսակի թմրամիջոցի փոխարեն նմանատիպ այլ զանգվածների պարունակությամբ առաքանին ստանալուց հետո ձերբակալվել եւ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն է տեղափոխվել ՀՀ քաղաքացի Լ. Խ-ն:

Տեղեկություններ են ստացվել նաեւ, որ ԱՄՆ-ից, նույն անձի անունից, կրկին ՀՀ է ներմուծվելու թմրամիջոցի պարունակությամբ եւս մեկ առաքանի:

Նշված օպերատիվ տվյալներն իրացնելիս ՊԵԿ եւ ԱԱԾ աշխատակիցները համատեղ «Ապավեն Տերմինալ» ՓԲ ընկերության մաքսային հսկողության գոտում մաքսային զննման են ենթարկել ԱՄՆ-ից ուղարկված միջազգային սուրհանդակային առաքանին: Հայտնաբերվել է մարիխուանա տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 2 փաթեթ, յուրաքանչյուրը՝ 530 գրամ քաշով:

Հիշյալ մաքսանենգության դեպքով թմրամիջոցի փոխարեն նմանատիպ այլ զանգվածների պարունակությամբ փոխարինված ծանրոցը ստանալուց հետո՝ ձերբակալվել եւ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն է տեղափոխվել ՀՀ քաղաքացի Ա. Ա.-ն, որտեղ վերջինս ենթարկվել է ձերբակալմանն ուղեկցող անձնական խուզարկության:

Այնուհետեւ Երեւանի թաղամասերից մեկում մարիխուանա տեսակի թմրամիջոցին նմանվող փոխարինված զանգվածների պարունակությամբ սուրհանդակային առաքանին վերցնելուց հետո՝ ձերբակալվել եւ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն է տեղափոխվել ՀՀ քաղաքացի Գ. Մ.-ն: Հիշյալ դեպքերով, ընդհանուր առմամբ, ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության եւ ԱԱԾ տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչության աշխատակիցների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում՝ շրջանառությունից դուրս է բերվել ավելի քան 4 կգ մարիխուանա, 24 գրամ հաշիշի յուղ եւ 66 գրամ կոկաին տեսակների թմրամիջոցներ:

Փաստի առթիվ քննչական կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՔԿ-Ն՝ ՉԱԽՈՅԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննչական կոմիտեն «Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ է հայտնում բլոգեր Արթուր Չախոյանի ձերբակալման հետ կապված.

«2024թ. մայիսի 18-ին տարբեր քաղաքացիներից հաղորդումներ են ստացվել այն մասին, որ նույն օրը մի խումբ անձինք՝ Ա.Չ.-ի գլխավորությամբ, մուտք են գործել Երեւան քաղաքի Կողբացի փողոցում գտնվող Հայաստանի խաղերի սպորտի եւ մշակույթի պալատ եւ Հայաստանի պետականակենտրոն կուսակցության կայանալիք նիստը խաթարելու նպատակով՝ վիճաբանել կուսակցության անդամների հետ: Դեպքի վայր են մեկնել ոստիկաններ, որտեղ պարզվել է, որ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով, վերոնշյալ միջադեպի մասնակիցների կողմից միմյանց հասցեին հնչել են հայհոյանքներ, ինչից հետո ծեծկռտուք է սկսվել, որի ընթացքում մասնակիցները հարվածներ են հասցրել միմյանց:

Միջադեպի վեց մասնակից, ինչպես նշված տարածք մտածներից, այդ թվում Վ. Չ.-ն, այնպես էլ այնտեղ գտնվողներից, ֆիզիկական ներգործություն եւ խուլիգանություն կատարելու հիմնավոր կասկածով ոստիկանների կողմից տեղափոխվել են Ոստիկանության բաժին, որտեղ ձեռնարկված միջոցառումներով պարզվել է բոլորի ինքնությունը:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երկրորդ բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Կայացել է նշված անձանց ձերբակալելու որոշում: Ձեռնարկվում են միջոցներ՝ դեպքի հանգամանքները, միջադեպին մասնակիցների շրջանակը պարզելու, նրանց գործողություններին իրավական գնահատական տալու ուղղությամբ:

ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ԴԵՊՔ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ

ArmLur.am լրատվականին հայտնի դարձավ, որ Հրազդանում՝ եկեղեցու բակում, հոգեհանգստի ժամանակ տեղի ունեցած աղմկահարույց կրակոցների գործով երկու անձ է ձերբակալվել:

Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Հրազդանում հոգեհանգստի սրահի բակում տեղի ունեցած աղմկահարույց սպանությունը խոր արմատներ ունի: Բանն այն է, որ հեղինակություն համարվող «Դերոյի Արսեն» անունով առավել հայտնի Արսեն Հունանյանը ներքին կռիվների մեջ է եղել Կոտայքի մարզի բնակիչ Արծրուն Ավետյանի հետ: Անգամ խոսակցություն է գնացել, թե ով ում է սպանելու եւ ում ձեռքով: Եվ ահա, տարիներ շարունակ ներքին թշնամանքը իր ճակատագրական ավարտին է հասել մայիսի 18-ին: Արծրուն Ավետյանը զենքով մտել է Հրազդանի եկեղեցու բակ, որտեղ հեղինակություն համարվող «Դերոյի Արսենը» մասնակցելիս է եղել հոգեհանգստի, ու կրակոցներ է արձակել նրա վրա: Հոգեհանգստի վայրում սկսվել է իրարանցում ու հեղինակություն «Դերոյի Արսենին» տեղափոխել են հիվանդանոց, որտեղ էլ նա մահացել է:

Սակայն, այսքանով ամեն ինչ չի ավարտվել: Սպանված «Դերոյի Արսենի» մտերիմ ընկերը նկատել է, որ կրակոցներ արձակող անձը դեպքից հետո նստել է Opel մակնիշի մեքենան ու հեռացել: Վերջինս հետապնդել է նրան ու Չարենցավանի ճանապարհին, մոտ 6 կրակոց է արձակել, ինչի հետեւանքով սպանվել է Արծրուն Ավետյանը:

Ի դեպ, այս դեպքից առաջ իրավապահները սպանության գործով անցնող անձանց զենքի կասկածանքով բաժին են տարել ու ստուգումներ են իրականացրել ու ահա ստուգումներից հետո հնչում են կրակոցներ:

Ավելի վաղ Shamshyan.com-ը գրել էր, որ մայիսի 18-ին, կրակոցներ եւ սպանություններ էին տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 19:10-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի եկեղեցու հարեւանությամբ գտնվող տարածքում կրակոցներ են հնչել եւ կան զոհեր ու վիրավոր:

Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ մահացածներն են Կոտայքի մարզի բնակիչ 50-ամյա Արծրունի Ավետյանը, ով տեղում է մահացել, իսկ հիվանդանոցում մահացել է Կոտայքի մարզի բնակիչ 49-ամյա Արսեն Հունանյանը, ով հայտնի է «Դերոյի Արսեն» մականվամբ, իսկ վիրավորը Կոտայքի մարզի բնակիչ 21-ամյա Արտյոմ Հայրապետյանն է, ով տեղափոխվել է «Հրազդան» բժշկական կենտրոն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 17-ից 20-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 200 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՏ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԻՐԵՆՑ ԽԱՂԵՐԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Տավուշի մարզում՝ Դիլիջանի Պարզ լճի տարածքում, ներկա է գտնվել «ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մրցաշարի եզրափակիչ փուլին: Մրցաշարին ներկա է եղել նաեւ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը: Տավուշի մարզպետարանի ֆեյսբուքյան էջը մոռացել է գրել, որ ներկա է եղել նաեւ Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանը, որ հրապարակված լուսանկարում պատկերված է եղել Նիկոլ Փաշինյանի եւ Հայկ Ղալումյանի կոքին:

Հայաստանի բարդ վիճակը, Տավուշի՝ սահմանագոտում Ադրբեջանին հանձնվող տարածքներն ու իրենց խաղերը:

ՈՒՂԵՐՁ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը շնորհավորական ուղերձ է հղել ընտանիքի միջազգային օրվա առթիվ: Նա ուղերձում նշել է, որ մայիսի 15-ը նշվում է որպես ընտանիքի միջազգային օր, այն 1993 թվականին սահմանել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան: Դրա նպատակը հանրության ուշադրության գրավումն է ընտանիքի բազմաթիվ խնդիրների նկատմամբ: 2011 թվականի փետրվարի 9-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «ՀՀ տոների եւ հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքը, որով մայիսի 15-ը հայկական տոնացույցում ամրագրվել է որպես Ընտանիքի օր: Մարզպետն ուղերձում նշել է, որ ընտանիքն առողջ եւ համերաշխ հասարակության հիմքն է, հասարակության հիմնական ինստիտուտներից մեկը. ընտանիքը հայ մարդու համար սրբություն է, ամուր ընտանիքը պետության զարգացման, ժողովրդի բարգավաճման կարեւոր գրավական է: Հայկ Ղալումյանը մաղթել է խաղաղություն, առողջություն ընտանեկան ջերմություն ու երջանկություն: Այդ ուղերձը հրապարակված է Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում եւ մարզպետարանի ֆեյսբուքյան էջում: Հրապարակված ուղերձի տակ լրագրող Նարինե Կիրակոսյանը հետեւյալ մեկնաբանությունն է գրել. «Լուրջ այդպիսի տոն կա՞, թե՞ մարդկանց զբաղեցնելու համար մոգոնեցիք: Հա, մեկ է՝ Նիկոլն ու դուք դատվելու եք (խմբ.)»: Կիրանցի ընտանիքներին պատկանող տները, շինությունները, տարածքները Ադրբեջանին հանձնող, ադրբեջանական սահմանապահ հենակետից 50 մետր հեռավորությամբ Կիրանցում դպրոց գործարկող, այդ կերպ Կիրանցի աշակերտներին ու նրանց ընտանիքներին սթրեսի մատնող մարզպետը չի զլացել, ընտանիքի միջազգային օրվա առթիվ գեղեցիկ բառերով, սիրուն մաղթանքներով շնորհավորանք է հղել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

Ո՞Վ ԷՐ ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԹԱՏԵՐԱԲԵՄՈՒՄ

Էբրահիմ Ռաիսոլսադաթին, ով քաղաքական շրջանակում հայտնի էր որպես Էբրահիմ Ռաիսի, եւ 2021 թվականից մինչեւ իր մահը՝ 2024 թվականի մայիսի 19-ը, Իրանի Իսլամական Հանրապետության նախագահն էր, սկզբունքային մուսուլման իրավաբան էր:

Մինչ նախագահի պաշտոնն զբաղեցնելը՝ Ռաիսին տարբեր պաշտոններ է զբաղեցրել դատական համակարգում՝ եղել է Թեհրանի դատախազի տեղակալ, ապա դատախազ՝ 1980-1990-ական թվականներին: Հայտնի էր «Թեհրանի դահիճ» կեղծանվամբ, քանի որ հանդիսանում էր «Մահվան կոմիտե» անվամբ հայտնի խմբի անդամ, որը պատասխանատու էր 1988 թվականին հազարավոր քաղբանտարկյալներին մահապատժի ենթարկելու համար:

Եղել է արդարադատության նախարարի տեղակալ, ապա նախարար:

Առաջին անգամ նախագահական ընտրությունների համար առաջադրվել է 2017 թվականին՝ պարտվելով գործող նախագահ Հասան Ռոհանիին՝ 57/38.3 տոկոս հարաբերակցությամբ: 2021 թվականին առաջադրվելով երկրորդ անգամ՝ դարձել է Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ՝ հավաքելով ընտրողների ձայների 62.9 տոկոսը:

Ռաիսի նախագահության շրջանում փակուղի են մտել ԱՄՆ-ի հետ «Գործողությունների համատեղ համապարփակ ծրագիրը», Իրանը սկսել է Ուրանի հարստացման գործընթաց եւ Գազա-իսրայելական հակամարտությունում աջակցություն ցուցաբերել Գազային: Երկրի ներսում, սակայն, ամեն բան չէ, որ խաղաղ է եղել. երկրում բազմահազարանոց ցույցեր են տեղի ունեցել՝ իրավունքների ազատականացման մի շարք պահանջներով, ինչը սկսվել է ոստիկանների կողմից բռնի ուժի կիրառումից հետո երիտասարդ Մահսա Ամինիի մահով:

Հատկանշական է այն, թե ինչ ազդեցություն ուներ նախագահ Ռաիսին միջազգային քաղաքական թատերաբեմում, եւ ինչպիսի վախ էր առաջացնում նրա վարած քաղաքականությունը: Այս համատեքստում պետք է մատնանշել, որ նրա նկատմամբ պատժամիջոցներ են սահմանված եղել ԱՄՆ Օտարերկրյա ակտիվների վերահսկման գրասենյակի կողմից՝ համաձայն 13876 Գործադիր հրամանի, ինչպես նաեւ մեղադրվել է մարդկության դեմ հանցագործությունների համար՝ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների եւ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողների կողմից:

Ռաիսին Իմամ Ռեզայի սրբավայրի մեծ իմամ Ահմադ Ալամոլհոդայի փեսան էր:

Հասկանալու համար, թե ինչ գործընթացներ են սկսվելու Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի մահից հետո, պետք է հասկանալ օրենսդրական կարգավորումները:

Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրության 131-րդ հոդվածի համաձայն՝ նախագահի մահվան, պաշտոնանկության, հրաժարականի, երկու ամսից ավելի բացակայության, հիվանդության կամ նախագահության ժամկետն ավարտվելու եւ խոչընդոտների առկայության դեպքում, նախագահի լիազորությունները ստանձնում է առաջին փոխնախագահը:

Այնուհետեւ, խորհրդարանի նախագահի, դատական իշխանության ղեկավարի եւ առաջին փոխնախագահի մասնակցությամբ ձեւավորված խորհուրդը կազմակերպում է արտահերթ նախագահական ընտրություններ, որոնք պետք է անցկացվեն առավելագույնը հիսուն օրվա ընթացքում:

Հիշեցնենք, որ կիրակի օրը՝ մայիսի 19-ին, նախագահ Ռաիսի ուղղաթիռը, որը Թեհրան էր վերադառնում Ադրբեջանի նախագահի հետ հանդիպումից, կործանվել էր Արեւելյան Ադրբեջան նահանգի Վարզաքան քաղաքում: Վթարի հետեւանքով նախագահից զատ զոհվել են ԻԻՀ արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահյանը, Արեւելյան Ադրբեջան նահանգի ղեկավար Մալեք Ռահմաթին եւ Մոհամմադ Ալի ալ Հաշեմը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

Ո՞Վ ԷՐ ԻՐԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ

Հոսեյն Ամիր-Աբդոլլահյան. իրանցի քաղաքական գործիչ, դիվանագետ, ով 2021 թվականի նախագահական ընտրություններից մինչեւ մայիսի 19-ը երկրի դիվանագիտական գերատեսչության ղեկավարն էր:

2011-ից 2016 թվականներին Աբդոլլահյանը եղել է արաբական եւ աֆրիկյան երկրների հարցերով փոխարտգործնախարար, Իրանի խորհրդարանի խոսնակի միջազգային հարցերով հատուկ օգնական, Իսլամական խորհրդատվական ժողովի միջազգային հարցերով գլխավոր տնօրեն, Պաղեստինի Ինթիֆադային աջակցության միջազգային խորհրդաժողովի մշտական քարտուղարության գլխավոր քարտուղար, ԱԳՆ միջազգային հարաբերությունների դպրոցի պրոֆեսոր:

Մոհամմադ Խաթամիի նախագահության օրոք միջուկային բանակցությունների ընթացքում Հոսեյն Ամիր-Աբդոլլահյանը եղել է միջուկային բանակցությունների քաղաքական եւ անվտանգության հանձնաժողովի անդամ: Նա առաջին իրանցի պաշտոնյան էր, ով հրավիրվել է Լոնդոն՝ Թեհրանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան վերաբացումից հետո տարածաշրջանային բանակցությունների մասնակցելու:

2007 թվականին Բաղդադում Իրան-Իրաք-ԱՄՆ եռակողմ հանդիպման ժամանակ ղեկավարել է իրանական բանակցային թիմը:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԺԵՏՈՆՆԵՐԸ ԴԵՌ ԱԿՏՈՒԱԼ ԿԼԻՆԵՆ

Երեւանի մետրոպոլիտենի տոմսեր չեն լինի ժետոններով, կգործի QR կոդերով եւ այլ համակարգերով վճարելու տարբերակը: Այս մասին, երեկ՝ մայիսի 20-ին, Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ժամանակ ասաց Երեւանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Մետրոպոլիտենի մամուլի խոսնակ Տաթեւ Խաչատրյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչպես են օգտվելու մեծահասակները, եթե չունեն հնարավորություն հեռախոսից կամ բանկային քարտից վճարելու. «Տարեցների համար լինելու են գանձապահները, իրենք մնալու են, կարող են մոտենալ իրենց 100 դրամը վճարել եւ գանձապահը իրենց փոխանցի 1 QR կոդ՝ մեկանգամյա օգտագործման համար նախատեսված, եւ վաճառվելու են նաեւ քարտեր, որոնք ժամկետով են լինելու. այսինքն՝ հստակ օրով եւ ամսաթվով»:

Նրա խոսքով՝ ժետոնները դեռ որոշ ժամանակ ակտուալ կլինեն:

Այս պահին Երեւանի մետրոպոլիտենի երեք կայարաններում՝ Բարեկամություն, Մարշալ Բաղրամյան եւ Երտասարդական տեղադրվել եւ փորձարկվում է անցակետերի նոր անցարգելները, որոնք բացվում են «Թել Սել Wallet»-ի QR կոդի միջոցով:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 31 պատահար. 1 մարդ զոհվել է, 38-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Արաբկիր, Ն. Զարյան փողոց, 15ա շենք, 36 հասցեում գտնվող 69.4 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 49350000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 06.06.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 08.07.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բիէսթի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Գոհար Ժորայի Հովհաննիսյանս, Երեւանի Կենտրոն համայնքի տարածքում մոտավորապես մեկ շաբաթ առաջ կորցրել եմ դիպլոմս՝ տրված Երեւանի պետական համալսարանի կողմից 2002թ.-ին: Դիպլոմիս համարն է AB 004792: Գտնողին խնդրում եմ զանգահարել 077 570 642 հեռախոսահամարով:

ԾՐԱԳԻՐ 4

«ԶԱՆԳԵԶՈՐ»-Ը՝ 4Future Banking ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

4Future Banking միջազգային համաժողովը Հայաստանում էր համախմբել աշխարհի առաջատար բանկերի շուրջ 150 փորձագետների, որոնք կիսվեցին իրենց փորձով ու գիտելիքներով՝ մշտապես զարգացող բանկային ոլորտի վերաբերյալ:

Միջոցառման ընթացքում Team Solutions ընկերությունը ներկայացրեց կոնտակտային կենտրոններին ամբողջական լուծում տրամադրող Zangezor պրոդուկտը:

Ծանոթացնելով ընկերության գործունեության ուղղություններին՝ Team Solutions ընկերության տնօրեն Տաթեւիկ Ավագյանը նշեց, որ իրենք մասնագիտացված են պետական կառավարման էլեկտրոնային համակարգերի եւ մասնավոր ոլորտին ուղղված ծրագրային լուծումների մշակման մեջ:

Ի թիվս բազմաթիվ իրականացրած եւ ընթացիկ նախագծերի՝ ընկերությունը մշակում է նաեւ սեփական պրոդուկտները, որոնց շարքում յուրահատուկ տեղ է զբաղեցնում «Զանգեզորը»: Վերջինս զանգերի, էլեկտրոնային նամակների, կարճ հաղորդագրությունների եւ շուտով նաեւ սոցիալական հարթակներից ստացված հաղորդագրությունների մշակման ու սպասարկման միասնական համակարգ է, որը դյուրինացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունների սպասարկման գործընթացը՝ հաճախորդներին հնարավորինս արագ եւ համապարփակ արձագանք տալով:

«Համակարգի ճկունությունը հնարավորություն է տալիս «Զանգեզորը» հարմարեցնել ցանկացած ոլորտի ընկերության բիզնես գործընթացներին, ինչպես նաեւ ինտեգրել ընկերության ներքին համակարգերի հետ՝ էականորեն բարձրացնելով հաճախորդների սպասարկման արդյունավետությունը». - ասաց ծրագրի ղեկավար Լիանա Տեր-Ավետիսյանը:

«Հաշվի առնելով մեր օրերում տեխնոլոգիական ոլորտի աննախադեպ զարգացումները, բնականաբար մենք եւս փորձում ենք ժամանակին համահունչ զարգացնել պրոդուկտը եւ մեր հաճախորդների համար ապահովել նորարարական լուծումներ: Առաջիկայում ցանկանում ենք դուրս գալ նաեւ միջազգային շուկա». - հավելեց Տաթեւիկ Ավագյանը:

Ներկայումս փորձարկման փուլում է գտնվում նաեւ արհեստական բանականության գործիքակազմի ներդրումը համակարգում:

4Future Banking միջոցառումը ոլորտի մասնագետների համար ծառայեց որպես հարթակ՝ մտքեր փոխանակելու, զարգացող միտումները քննարկելու եւ թվային դարաշրջանում հաճախորդների զարգացող պահանջները բավարարելու նորարար մոտեցումներ ուսումնասիրելու համար:

Պանելային քննարկման եւ ելույթների ժամանակ խոսնակներն անդրադարձան այնպիսի կարեւոր թեմաների, ինչպիսիք են հաճախորդների ֆիզիկական եւ թվային փորձառությունների միջեւ հավասարակշռությունը, թվային դարաշրջանում հաճախորդների հավատարմության ապահովումը, հաճախորդների հետ կայուն հարաբերությունների պահպանումը եւ այլն:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» 4

ԱՃՈՒՐԴ՝ ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

2024թ. -ի հունիսի 3-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով:

Թիվ 27 լոտ՝ ոսկյա ջարդոն 18.7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 15.2 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 258.000 ՀՀ դրամ: Թիվ 28 լոտ՝ ոսկյա ջարդոն 11.5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 11 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 186.000 ՀՀ դրամ: Թիվ 29 լոտ՝ոսկյա ջարդոն 8 գր. ընդհանուր քաշով՝ 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 135.000 ՀՀ դրամ: Թիվ 30 լոտ՝ ոսկյա ջարդոն՝ 17.1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 16.5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 280.000 ՀՀ դրամ: Թիվ 31 լոտ՝ ոսկյա ջարդոն 13.8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 13.5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 229.000 ՀՀ դրամ: Թիվ 32 լոտ՝ ոսկյա ջարդոն 19.7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 19.5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 330.000 ՀՀ դրամ: Թիվ 33 լոտ՝ ոսկյա ջարդոն 19.3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 19 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 322.000 ՀՀ դրամ: Թիվ 34 լոտ՝ ոսկյա ջարդոն 23.7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 23.4 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 397.000 ՀՀ դրամ: Թիվ 35 լոտ՝ ոսկյա ջարդոն 9.2 գր. ընդհանուր քաշով 958 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 256.000 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը. նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ.՝ +374 43 00 42 27:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՄԱՍՆԱԿԻՑ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Հայաստանում արդեն երկրորդ տարին է՝ կազմակերպվում է տնտեսագիտական միջազգային օլիմպիադա՝ ավագ դպրոցականների շրջանում ֆինանսական եւ տնտեսագիտական գրագիտության մակարդակը բարձրացնելու, տնտեսագիտության ու ֆինանսատնտեսագիտական ոլորտի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով:

Այս տարի օլիմպիադան մեկնարկեց մարտին՝դպրոցական փուլում գրանցելով տպավորիչ ցուցանիշներ. Հայաստանի 110 դպրոցներից ավելի քան 890 10, 11, եւ 12-րդ դասարանների աշակերտներ մասնակցեցին, որոնցից 91-ը հաղթահարելով անցողիկ շեմը՝ անցան հանրապետական փուլ: Օլիմպիադային մասնակցելու համար բավարար են միջառարկայական գիտելիքները, որոնք աշակերտները ստանում են հասարակագիտություն, մաթեմատիկա առարկաների շրջանակում: Օլիմպիադան անցկացվում է երեք փուլով՝ դպրոցական, հանրապետական եւ միջազգային:

Օլիմպիադայի հանրապետական փուլը տեղի կունենա 2024 թվականի մայիսի 21-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում: Գրավոր եւ բանավոր փուլերի արդյունքում կպարզվեն հաղթողները, իսկ անգլերենով ամենաբարձր ցուցանիշներ գրանցած մասնակիցներից 5-ը կմասնակցեն միջազգային փուլին՝ սեպտեմբերին, Հունաստանում՝ ավելի քան 20 երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՀՀ-ում օլիմպիադան առաջին անգամ կազմակերպվել է 2022-2023 ուսումնական տարում. հանրապետական փուլին մասնակցության իրավունք էր ստացել դպրոցական փուլը հաղթահարած 36 աշակերտ: Դպրոցական փուլին մասնակցել էին 10, 11, եւ 12-րդ դասարանների շուրջ 400 աշակերտներ Երեւանի եւ մարզերի 70 դպրոցներից: Գրավոր եւ բանավոր փուլերի արդյունքում առավել բարձր ցուցանիշներ գրանցած 5 մասնակիցները մասնակցեցին Սլովակիայում կայացած միջազգային փուլին՝գրանցելով տպավորիչ արդյունքներ 17 երկրների շարքում:

Հայաստանում օլիմպիադան կազմակերպվում է Վարքագծային որոշումների կենտրոնի կողմից՝ ՀՀ ԿԳՄՍՆ-ի, ՀՀ կենտրոնական բանկի, Հայաստանի ամերիկյան համալսարանի, ինչպես նաեւ միջազգային գործընկերների՝ Economic Fundamentals Initiative-ի հետ սերտ համագործակցությամբ: Այս տարի օլիմպիադայի անցկացմանը աջակցել են նաեւ «Էվոկաբանկը» եւ «Իզի Փեյ» ընկերությունը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ 125...» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Այս տարի լրանում է հայ նշանավոր քանդակագործ եւ գեղանկարիչ, եռաչափ եւ կինետիկ գեղանկարչության հիմնադիր Երվանդ Քոչարի 125-ամյակը:

Հոբելյանի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը եւ Երվանդ Քոչարի թանգարանը հայտարարել էին մրցույթ դպրոցների (8-12-րդ դասարաններ) ու նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների համար: Մրցույթի նպատակն էր մեծանուն արվեստագետի ժառանգության հանրահռչակումը, պատանիներին ու երիտասարդներին այն առավել ճանաչելի դարձնելը:

Երվանդ Քոչարի 125-ամյակին նվիրված մրցույթի շրջանակում հրապարակված մրցութային 5 հարցերի մեկնաբանություններում գրվել է շուրջ 260 պատասխան:

Մայիսի 14-18-ը՝ յուրաքանչյուր օր, ԿԳՄՍ նախարարության ֆեյսբուքյան էջում հրապարակվել են Երվանդ Քոչարի կենսագրությանը, ստեղծագործական կյանքին վերաբերող տարաբնույթ հարցեր, եւ համաձայն մրցութային պայմանների՝ առաջինը ճիշտ պատասխանողը ճանաչվել է տվյալ օրվա հաղթող:

Խմբագրված, ինչպես նաեւ այլ օգտատերերի ֆեյսբուքյան էջերից հրապարակված պատասխանները չեն դիտարկվել: Որպես պարտադիր պահանջ՝ պատասխանում պետք էր միայն հայատառ նշել սովորողի տվյալները (անուն, ազգանուն, մարզ, քաղաք/գյուղ, ուսումնական հաստատություն, դասարան/կուրս, մասնագիտություն):

Ներկայացնում ենք հարցերին առաջինը ճիշտ պատասխանած մասնակիցներին.

. ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյանի Արայի անվան միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Թամարա Մակարյան,

. Երեւանի Ինֆորմատիկայի պետական քոլեջի «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր եւ ցանցեր» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող Արծրուն Առաքելյան,

. Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջի «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող Հովիկ Ղազարյան,

. Երեւանի թիվ 118 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Արաքսյա Սարգսյան:

Մրցույթի 2-րդ օրվա հարցի մեկնաբանություններում ճիշտ պատասխան չի գրվել, հետեւաբար՝ այդ օրվա հաղթող չի եղել:

ԿԱՄՈՒՐՋՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՎ

Մայիսի 21-23-ը Հայաստանի Հանրապետությունը կհյուրընկալի Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) ՄԿՈՒ որակի ապահովման ֆորումը՝ «Աշխատանքին միտված ձեւավորող գնահատման որակի ապահովում» խորագրով:

ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրում նախանշված է շրջանավարտների մասնագիտական զբաղվածության մակարդակը հասցնել 90%-ի: Սահմանված ցուցանիշի ապահովումը խթանելու համար Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կողմից մշակվել է Աշխատանքին միտված ձեւավորող գնահատման որակի ապահովման մոդել, որը հնարավորություն է տալիս հետեւել, թե ինչքանով են գործատուները քոլեջներում մասնակցում ուսանողների կրթությանը՝ դասավանդումից մինչեւ մասնագիտական հմտությունների ձեւավորում եւ ընթացիկ գնահատում՝ թողարկելով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետ:

Երեք օրերի ընթացքում 16 երկրներ ներկայացնող փորձագետները հանդիպումներ կունենան ՀՀ գերատեսչությունների ղեկավարների, գործատուների, գործատու-դասախոսների, ՄԿՈՒ հաստատությունների տնօրենների, կրթական ծրագրերի, կարիերայի կենտրոնների ներկայացուցիչների, որակի ապահովման պատասխանատուների հետ:

Ֆորումի շրջանակներում փորձագետները խորհրդատվություն կտրամադրեն, թե որակի ապահովման մեխանիզմների միջոցով ինչպես առավել շատ խթանել գործատուի համատեքստը ճանաչող շրջանավարտների պատրաստմանը՝ աշխատաշուկան համալրելով կարողունակ եւ մրցունակ մասնագետներով:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԻՆՏԵՐ» – «ԼԱՑԻՈ» ԽԱՂԸ՝ ՈՉ ՈՔԻ

Իտալացի Սիմոնե Ինձագիի գլխավորած թիմը պարտությունից խուսափեց վերջին րոպեներին՝1:1:

32-րդ րոպեին «Լացիոյի» գոլը խփեց ճապոնացի կիսապաշտպան Դաիչի Կամադան: «Ինտերը» հավասարությունը վերականգնեց 88-րդ րոպեին հոլանդացի պաշտպան Դենզել Դյումֆրիսի գոլի շնորհիվ:

Հայաստանի հավաքականի նախկին ավագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը «Ինտերի» մեկնարկային կազմում էր եւ փոխարինվեց 64-րդ րոպեին:

«Ինտերը» վաստակել է 93 միավոր, «Լացիոն» 60 միավորով 7-րդն է:

ԳԼՈՒՇԱԿՈՎԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է «ՈՒՐԱՐՏՈՒԻՑ»

Երեւանի «Ուրարտու» ֆուտբոլային ակումբի կիսապաշտպան Դենիս Գլուշակովը հեռանում է ակումբից:

Այս մասին գրում է ռուսական «Սպորտ-էքսպրեսս»-ը:

«Մրցաշրջանն ավարտվում է, գնում եմ՝ իրերս հավաքելու եւ հետո հրաժեշտ կտամ բոլորին: Հեռանում եմ «Ուրարտու»ից: Մենք պայմանավորվածություն ունեինք մինչեւ մրցաշրջանի ավարտը: Իսկ թե հետո ինչ կլինի, ցույց կտա ժամանակը».-ասել է Գլուշակովը: Վերջինս «Ուրարտու»-ին միացել էր 2024 թվականի փետրվարին:

37-ամյա փորձառու ֆուտբոլիստը իր կարիերայի ընթացքում հանդես է եկել Ռուսաստանի Պրեմիեր լիգայում, մասնավորապես՝ Մոսկվայի «Լոկոմոտիվ»-ի եւ «Սպարտակ»-ի, ինչպես նաեւ «Ախմատ», «Խիմկի» եւ «Նիժնի Նովգորոդ» ակումբներում: Կիսապաշտպանը 2016/17 մրցաշրջանում դարձել է Ռուսաստանի չեմպիոն, ինչպես նաեւ Մոսկվայի «Սպարտակ»-ի կազմում՝ Ռուսաստանի սուպերգավաթի հաղթող:

Ռուսաստանի հավաքականի կազմում Գլուշակովը մասնակցել է 2018 թվականի աշխարհի առաջնությանը, ինչպես նաեւ 2012 եւ 2016 թվականների Եվրոպայի առաջնություններին:

«ԲԱՎԱՐԻԱՆ» ՋԻԴԱՆԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԻ ՎԱՐԻ

Մյունխենի «Բավարիայի» ղեկավարությունը մտադիր չէ բանակցություններ վարել ֆրանսիացի մասնագետ Զինեդին Զիդանի հետ:

Նախորդ ամիս ֆրանսիական L'Equipe-ը գրել էր, որ Զիդանը կնախընտրի գլխավորել ոչ թե «Բավարիան», այլ անգլիական «Մանչեսթեր Յունայթեդը»: Ավելի վաղ տեղեկություններ կային, որ «Բավարիան» Թոմաս Տուխելին փոխարինելու համար չի կարողացել համաձայնության գալ Գերմանիայի նոր չեմպիոնի գլխավոր մարզիչ Խաբի Ալոնսոյի, Լիսաբոնի «Բենֆիկան» մարզող Ռոջեր Շմիդտի եւ Ավստրիայի հավաքականի ղեկը ստանձնած Ռալֆ Ռանգնիկի հետ: Տուխելը հայտարարել էր, որ չի մնա «Բավարիայի» գլխավոր մարզիչի պաշտոնում: Գերմանիայի ավարտված առաջնությունում մյունխենցիները 72 միավորով զբաղեցրել են 3-րդ տեղը:

● Մայիսի 26-ին՝ ժամը 21:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա Սերգեյ Դանիելյանի «Էն Լոռու ձորն է» մոնոներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ որդեգրման պետական գրանցման համար, եւ որքան է կազմում պետական տուրքի դրույքաչափը: Խնդրում եմ նաեւ տեղեկացնել, թե ինչ ժամկետում է կատարվում որդեգրման պետական գրանցումը:

Մարինե Ամրոյան (41 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ որդեգրման գրանցման համար պահանջվում է ներկայացնել՝

1) որդեգրողի (որդեգրողների) անձը հաստատող փաստաթղթերը (պատճենները),
2) դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը,
3) երեխայի ծննդյան ակտային գրանցման տեղեկանքը կամ ծննդի պետական վկայականը,
4) դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի միջոցով:

Միաժամանակ հայտնում ենք, որ որդեգրման պետական գրանցումը կատարվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու նույն աշխատանքային օրը: Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից որդեգրման պետական գրանցման՝ ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ որդեգրման պետական գրանցման համար հիմք է դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը: Որդեգրման պետական գրանցման համար դիմումը կարող է ներկայացվել որդեգրողի (որդեգրողների) կամ նրա լիազորած անձի միջոցով: Որդեգրման պետական գրանցումը կատարում է ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Ջենյա Օհանյան (53 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն):

Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Շառլ Ազնավուրի 100-ամյա հոբելյանի կապակցությամբ՝ օրերս Փարիզի 9-րդ թաղամասի Նավարեն 22 փողոցում բացվեց հուշատախտակ՝ նվիրված աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնավուրի հիշատակին: 1939-1956թթ. ընթացքում Փարիզի Մոնմարտր պատմական այս թաղամասում է Շառլ Ազնավուրն անցկացրել իր մանկությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 6 +14 + 18
Կոտայքի լեռներ	+ 2 + 6 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
Գեղարքունիք	+ 2 + 5 +13 + 17
Լոռի	+ 3 + 5 +13 + 16
Տավուշ	+ 7 + 10 +17 + 19
Արագածոտնի լեռներ	+ 2 + 4 +12 + 14
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 +19 + 23

Արարատ	+ 9 + 12 +22 + 24
Արմավիր	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +13 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +22 + 24
Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 +18 + 21
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +14 + 17
ԼՂՀ	+ 5 + 9 +14 + 16
Երեւան	+ 16+ 18 + 21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.5.2024**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*